ԷՍՊԵՍ ԷԼ ԿԱ, ԷՆՊԵՍ ԷԼ... / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Մի ախչիկ ու մի տղա իրար շատ սիրել են։ Հին ժամանակ թաքավորը սովորութին ուներ դերվիշի կերպով ման գալ իրա քաղաքում. հանկարծ գնաց տեհավ էդ ախչկանն ու էդ տղին։ Տղեն դրել ա գլուխն ախչկա գոքում, ինքը քնել, ախչիկը տղի գլուխը շոյում ա։
Թաքավորը զարմացավ էդ սերի վրա, ասավ.— Այ բախտ, այ սեր, մեր թաքավորութինը քանի՞ կոպեկ արժի։ Երանի թե ես իմ կնգա հետ տհե սեր ունենայի։
Եվ թաքավորը գնաց, իրա կնգանը պատմեց էդ սերի մասին։
Թաքավորին թաքուհին պատասխանեց, թե.— Մարթիցն ա, որ կնիկն էդքան սիրում ա մարթին։
Թաքավորը հակառակ խոսեց, ասավ.— Ոչ, կնոջիցն ա, կինը հալալ կաթնակեր ա, իրան մարթին հարգում ա ու սիրում։
Դրանք փորձի բռնեցին։
Կնիկը մի նամակ գրեց էդ տղի վրա, որ.— Սիմոն, ես քեզ տեհել եմ այսինչ ժամանակ քաղաքումը ման գալիս, քեզ հավանել եմ, թաքավորի գլխին ես մի օղբաթ կբերեմ, դուն արի նստի թաքավոր, ես էլ լինեմ թաքուհի, էս աշխարը մեզ հմա լի ա, ի՞նչ ես տհենց ախկատ մնըմ։
Թաքուհու ծառեն էդ նամակը տարավ էդ Սիմոնի մոտ։
Սիմոնը բացեց նամակը և կարթաց և լուռ ու մունչ պատասխանը գրեց, որ.— Դու նստի քու տեղը թաքուհի, թաքավորն էլ իրա տեղը՝ թաքավոր։ Ես քեզ չեմ սիրել, չեմ էլ սիրիլ՝ իմ սիրուհուն թողած իմ սերը չեմ փոխիլ ամբողջ աշխարի հետ։
Էդ պատասխանը որ տարավ թաքուհուն տվուց, թաքուհին մնաց զարմացած։ Փորձն էկավ թաքավորին։ Նա ախչկա վրա գրեց.— Աստղի՛կ, ես քեզ քաղաքում տեհել եմ, հավանել եմ։ Արի էդ տղի գլխին մի օղբաթ բի, վերչ տու դրա կենքին, արի ինձ կին եղի թաքուհի, ծառաներն ըղաքիդ ղուլլուղ անեն, դուն էլ փառք ու պատվում ապրի։
Ախչիկը մտածեց մի առժամանակ վերչը հնարը գտավ։ Թաքավորին պատասխանեց, թե.— Այսինչ օրը, այսինչ սհաթին կգաս ինձ կտանես։
Հենց ախչկա մտկումն էդ էր, որ տղի գլխին մի օղբաթ բերե, վերչ տա նրա կենքին և գնա փառք ու պատվով ապրի։
Հենց որ պատասխանը հասավ թաքավորին, թաքավորը մի խեղճի մոդիկ մարթ էր, խղճաց տղի երիտասարդութենին։
— Տղերք,— ասավ,— հասեք տղի գլխին փաթերակ պտի դեիլ, կինը մուխաննաթ ա, չեմ հավատալ, ասավ, այսուհետև կնոջ խոսկին, կնոջ սերին։
Ղրգած մարթիկ ընտի վրա հասան, որ տղի գլուխն ախչկա ծնգան վրա, ախչիկը թոգը օղ ու ճիտ ա արել, որ խեղդե տղին։
Էդ տեղ տղին ազատեցին։
Կնոջն ասավ.— Բա որ ասում եմ մուխաննաթ են կնանիքը։ Նրա համար են հին մարթիկը հին խոսքով ասում, որ ախպեր, կնանիքն էնա մազներուն երգեն, խելքներուն կարճ են էլի, շուտ խափվում են։
Թաքավորի ջիգր էկավ, էդ բանը եփ որ տեհավ։ Հրամայեց իրա ըղաքի վեզրին, ասավ.— Մեր քաղաքումը ամբողջ էգեղենը՝ կնիկը պտի կտրվի։
Էդ ինքը հրամայեց, ֆայտոն նստեց եդո գնաց քաղաքից հեռացավ։

Վեզիրն անփորձ մարթ էր, ինքը ջահել, երիտասարդ։ Բայց նա ուներ մի ծեր հեր, որ թաքավորի պապի առաջի վեզիրն ա էլել և շատ ուժեղ փահլեվան և խելացի շատ փորձված, բայց ինքը ծեր էր և աչկերը կուրացած։
Թաքավորի վեզիրը որ էկավ, հայրը հասկացավ, տեհավ որ է՛ տղի քեփը շատ խարաբ ա։ Եվ հարցրեց նրան որ.— Ի՞նչ ա պատահել, այ տղա, մինչև հմի ուրախ էիր։
— Է՛,— ասավ,— հայր, որ գիտենաս, թե մեր թաքավորն ի՛նչ ա հրաման տվել...
— Ա՛յ տղա, ի՞նչ ա պատահել։
— Չգիտե՛մ, հայրիկ, —ասավ,— ասել ա, որ մեր քաղաքի կնանիքը պտի կտրվին, ու ինքը ֆայտոն նստեց գնաց քաղաքից. էսա եդ կգա, կնգա ձեն չպիտի լսվիլ։
— Բան չի կա,— ասավ,— տղա ջան, որ թագավորը գա, ինձ տար նրա կուշտը, ես նրան պատասխան կտամ, դուն ոչ մի կնդա քեփն չկպչես։
Թաքավորը եփ որ էկավ, տեհավ քաղաքումը հարսն ու տղա, կին ու մարթ իրանց քեփն են շարունակում, ջղայնութինը բռնեց։
Գնաց թախտին նստեց ու հրամանով կանչեց իրա վեզիրին։
Վեզիրը դղդղալով հորը հայտնեց, որ.—Թաքավորը կանչում ա, հայրիկ.
— Դե, կանչում ա, տղա ջան, տար ինձ թաքավորի կուշտը։
Տղեն հորը տարավ թաքավորի կուշտը, և թաքավորը տեհավ, որ էդ ծերունին էկավ։ Նրան լավ ճնանչեր, որ հնարագետ մարթ ա նա։ Թաքավորն իսկույն աթոռը դրուց, հրավիրեց ծերունուն և աթոռին նստացրեց։ Ծերունին սկսեց մեղում հարցնել.
— Թաքավոր, ի՞նչ ա պատահել, ի՞նչ ես ջղայնացել, դուն ջահել մարթ, ըսկի չգիտե՞ս, թե աշխարումը էտպես բաներ էլ կա։ Դուն ինձ լավ ճանաչում ես, որ ես քու հոր առաջի վեզիրն եմ էլել և շատ ուժեղ ածդահա եմ էլել։ Ինչ որ հրամայել ա, ես կատարել եմ, բայց մսլահաթով։ Ու պատմեց էս տեսակ մի դեպք. — Ես իմ ջահել ժամանակը իմ կաբինեթում նստած գիր էի գրում։ Մեկ էլ տեհա դուռը թխկացրին։ Ուշադրութին չդարձրի, շարունակեցի իմ գիրը գրել։ Մին էլ թխկացրին։ Համա հենց մի լավ պատմութին ա միտս ընգել գրում եմ, որ ըսկի թողնել չի կարելի։ Հանկարծ, մեկ էլ ուժեղ թխկացրուց, դուռը բաց արավ։ Տեհա մի ածդահա մարթ, զենք ու զրահ կապած։ Ջղայնացած ինձ ասավ.— Այ տղա, որ քանի անգամ դուռը թխկացնում եմ, ինչի՞ չես ուշադրութին դարձնում։
Ես խոնարհվեցի նրան։ Ամա իմ օրումս ոչ մի բանից չէի վախեցած, դրա էդ խոսկերից վախեցի։ Աթոռ դրի և ասացի.— Արի նստի։
Ասավ.— Արի՛ դուս։
Դուս էլա եդնեն, տեհա՝ ըհը, հրես էրկու ձի թամքած, դռանը կապած։ Մեկն ինքը նստեց, ինձ էլ ասավ.— Դվորը գնամ, ետնես արի։
Առանց ծպտալու եդնեն քշեցի և մտածում եմ, որ սա ինձ ո՞ւր ա տանում։ Մի քանի կիլոմետր անտառներով գնացի և ես էլ ուժի տեր եմ, ուժս հավաքեցի ու գուրզս գձեցի՝ որ մի տալով նրա կենքին վերջ տամ, ազատվեմ նրա ձեռից։
Հենց որ գուրզս դիբավ, էթեն պատասխանեց ինձ.—Ա՛յ տղա, հանաքի վախտ ես գտել, չէ՞ տեղ ենք գնում։
Մնացի զարմացած. ասի.— Էս ի՞նչ թավուր մարթ ա, էս աշխարում ինձ պես ուժեղ մարթ չի կա, սա իմ գուրզի դիպչելը հանաք հաշվեց։ Վախեցի նրանից։ Գնացինք մի սարի բլուլ։ Կլի էսպես սհաթի քշերվա էրկուսը։ Վեր էկանք էդ սարի բլլումը, ի՞նչ տենամ, մի մենձ ամարաթ իրան հասարովը, միջին միայն մի վառած լամփ ա ըրևում։
Ասավ.— Այ տղա, էս ձին բռնե, մի սհաթ քեզ ժամանակ, տենո՞ւմ ես էն տունը, ես գնում եմ ընդի։ Եթե տենաս ըտեղ գրգռոցն էկավ ու լամփեն եդ վառվում ա, ընդով ըսպասի։

Մի սհաթ չի քաշում, գրգռոցն ընգավ էդ ամբողջ տան մեջ։
Վախտիցն էրկու հրոպե պակաս դուս էկավ, ձեռին բերեց մի արնոտ խանչալ և մի մարթի գլուխ։ Մնացի զարմացած։
Ինձ ասավ.— Այ տղա, արի գնանք։
Ձիանը կապեցինք պալատի դռանը, ինձ տարավ մի նոր գերեզման շանց էրեթ։
Էդ տեղ ինձ ասավ.— Այ տղա, ես քու անումովն էկել էի, որ էս աշխարում քեզ պես փորձված ու ուժով մարթ չի կար, բայց որ սրան զուր զոհ կտամ. լավ էն ա՝ ես գնամ։ Ես գնացի և կատարեցի իմ սրտիս փափագը։ Դա իմ թշնամին էր, իմ սիրած տղին դա սպանել ա էս խանչալով, հմի էս թազա գերեզմանումն ա, որ մթամ թե ինձ տանի իրան կնիկ։ Այ տեսնո՞ւմ ես էս գլուխը, էս մարթն ա։ Վերջ տվի սրա կենքին։ Արի դուն, ես քեզ խնթրում եմ, ինձ սպանե էս արնոտ խանչալովը, որ իմ սիրած տղի արնոտն ա, և ինձ էդ գերեզմանումը թաղե, էս գլուխն էլ դիր մեր էրկուսի ոտի տակին, եդո ծածկե մեզ, ոնց որ պետկն ա։
Բայց ես մերժեցի ախչկա խնթիրը և զարմացա նրա սերիցը, թե ի՞նչ թավուր սեր ուներ նա, որ իրան սիրած տղի հետ ուզեր գերեզման մտնի և իրան թշնամու հախիցն էկավ։
Ինքը շատ մտածեց եդո հնարը գտավ ասավ.— Ես ինձ կըսպանեմ, բայց խնթրում եմ էդ դիակը բաց անես, էդ գլուխը դնես մեր ոտների տակին և ծածկես՝ ինչպես պետկն ա և գնաս էդ մարթի խազինեն բարցես ձիուն ու գնաս։ Հանկարծ խանչալը ինքը խրեց իրան սիրտը և մահացավ։ Ես նրա ասածները կատարեցի։
— Այ թաքավոր, —ասավ ծերունին,— էդպես էլ կա կին, էնպես էլ կա կին, իմ օրումս ես ըտենց բաներ շատ եմ փորձել. աշխարումը ամեն բան էլ կպատահի. հանգստացի ու փոխե էդ չար միտկդ։
Թաքավորը լուռ ու մունջ խոնարվեց ծերունու խոսկերին և ասաց.— Հավատալի է քո խոսկերը, ծերունի։